ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

*ՈՐՈՇՈՒՄ*

*15-ը օգոստոսի 2025 թվականի N 72 Ա*

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ՝ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Հաստատել 15-ը օգոստոսի 2025թ. արտահերթ՝ չորրորդ նիստի օրակարգը հետևյալ հարցերով.

2.Եղեգիս համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օրը սահմանելու մասին,

3.Եղեգիս համայնքի 2025 թվականի առաջին կիսամյակի տարեկան աշխատանքային պլանի և իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվության հաստատման մասին,

4.Եղեգիս համայնքի 2025 թվականի հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին,

5.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2026-2028թ.թ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին,

6.Թառաթումբ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

7.Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

8.Քաղաքացի Կարեն Էդվարդի Մարգարյանի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

9.Քաղաքացի Թամարա Գևորգի Խաչատրյանի սեփականություն հանդիսացող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

10.Եղեգիս համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը

հաստատելու մասին,

11.27-ը հունվարի 2025 թվականի «Եղեգիս համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 02Ն որոշմամբ հաստատված բյուջեում վերաբաշխում կատարելու մասին,

12.Աղնջաձոր գյուղի վարչական սահմանների «Սարահարթ» կոչվող տարածքում գտնվող չշահագործվող ցինկե խողովակաշարից 150մ ապամոնտաժելու մասին,

13.Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական տեխնիկան վարձակալության տրամադրելու և վարձավճարի չափը սահմանելու մասին,

14.Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2025թ. երկրորդ եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի մասին,

15.Հորս գյուղի մշակույթի տան վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ իրականացնելուն համաձայնություն տալու մասին,

16.Մանկական զարգացման կենտրոնի բացման նպատակով Շատին գյուղի մշակույթի տան վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ իրականացնելուն համաձայնություն տալու մասին,

17.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0,93885 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդային կարգով օտարելու մասին:

18.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ **ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 73 Ա

## *ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

Եղեգիս համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի առաջին նիստի գումարման օր սահմանել 2025 թվականի սեպտեմբերի 19-ին, ժամը 15:00-ին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 74Ա

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1)-րդ կետի պահանջներով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

Հաստատել Եղեգիս համայնքի 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում տարեկան աշխատանքային պլանի և իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվությունը, համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՇԱՐՈՆ — ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ — ԱՇԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված

Եղեգիս համայնքի ավագանու

15-ը օգոստոսի 2025թ. N 74 Ա որոշման

# ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔ











## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025

Հուլիս

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ........ 3
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ ........ 4
2025թ. 1-ին եռամսյակ........ 4
2025թ. 2-րդ եռամսյակ ........ 5

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2025թ-ին Եղեգիս համայնքում աշխատանքներն ու ծրագրերն իրականացվել են՝ համաձայն համայնքի 2023-2027թթ. հնգամյա զարգացման ծրագրի դրույթների, 2025թ. տարեկան աշխատանքային պլանի, հաշվի առնելով համայնքի առկա ռեսուրսները, առանձնահատկությունները, զարգացման գերակա ուղղությունները, նախապես քարտեզագրված ծրագրային առաջնահերթությունները:

Տնտեսական և սոցիալական զարգացման ուղված այլ ծրագրեր:

Հաշվետվությունը բաղկացած է ըստ եռամսյակների կատարված աշխատանքներից և համայնքի կապիտալ ձեռքբերումներից 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում:

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԸ

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում իրականացված աշխատանքների շնորհիվ գրանցվել են զգալի արդյունքներ, ըստ ոլորտների և ուղղությունների:

### 2025թ. 1-ին եռամսյակ

1.Աղնջաձոր գյուղում կատարվել է խմելու ջրի ջրագծի վթարված հատվածի նորոգման աշխատանքներ:

2.Շատին գյուղում կատարվել է խմելու ջրի ջրագծի վթարված հատվածի նորոգման աշխատանքներ:

3.Հորբատեղ, Հերմոն, Գողթանիկ, Վարդահովիտ, Հորս, Քարագլուխ, Թառաթումբ և Աղնջաձոր գյուղերում կատարվել է ձնամաքրման աշխատանքներ:

4.Շատին գյուղի գերեզմանատանը կատարվել է ձնամաքրման աշխատանքներ:

5.Հորս գյուղում դեպի ջրամբար տանող ճանապարհում կատարվել է ձնամաքրման աշխատանքներ:

6.Շատին գյուղի հին ջրհանկայանի մոտակայքում կատարվել է խմելու ջրի ջրագծի վթարված հատվածի վերանորոգման աշխատանքներ:

7.Աղնջաձոր գյուղում կատարվել է փողոցային լույսերի վառված լեդերի նորով փոխարինման աշխատանքներ:

8.Արտաբույնք գյուղում կատարվել է ծառերի ավելորդ ճյուղերի հատման և փողոցային լույսերի վառված լեդերի նորով փոխարինման աշխատանքներ:

9.Շատին գյուղում կատարվել է ծառերի ավելորդ ճյուղերի հատման և ճանապարհի եզրի աղբի տեղափոխման աշխատանքներ:

10.Աղնջաձոր գյուղում կատարվել է դեպի ՛Դեմեր՛ կոչվող հանդամաս տանող ճանապարհի մի մասի կառուցման աշխատանքներ:

11.Հորս գյուղում կատարվել է ՛Չեսար Օրբելյանի՛ անվան նստավայրին հարակից շրջված խաչքարի ուղղման աշխատանքներ:

12.Քարագլուխ գյուղում կատարվել է վարչական շենքի /այժմ նաև դպրոցի/ մուտքի շերենապատման աշխատանքներ:

13.Շատին գյուղում կատարվել է կենտրոնական ճանապարհի առվի մաքրման և աղբի տեղափոխման աշխատանքներ:

## 2025թ. 2-րդ եռամսյակ

1.Հորս գյուղում կատարվել է գերեզմանների հարակից լանջերի հարթեցման աշխատանքներ:

2.Եղեգիս գյուղում կատարվել է ջրագծի նորոգման, ծառահատման և շեբենապատման աշխատանքներ:

3.Շատին գյուղում կատարվել է հանդամիջյան ճանապարհների վերանորոգման և առվի նորոգման աշխատանքներ:

4.Հորս գյուղում կատարվել է փողոցների շեբենապատման և հարթեցման աշխատանքներ:

5.Թառաթումբ գյուղում կատարվել է գյուղամիջյան ճանապարհների լայնացման, հարթեցման, ավելորդ գրունտի բարձման և հեռացման աշխատանքներ:

6.Շատին գյուղի ՙԿարթափա՚ կոչվող տեղամասում գտնվող առվի վրա կատարվել է խողովակի տեղադրման աշխատանքներ:

7.Շատին գյուղում կատարվել է գերեզմանատեղիի կառուցման աշխատանքներ:

8.Արտաբույնք գյուղում կատարվել է փողոցային լույսերի վերանորոգման աշխատանքներ:

9.Եղեգիս գյուղում կատարվել է քարաթափված հատվածի մաքրման և ջրագծի հետլիցքի աշխատանքներ:

10.Հորս գյուղում կատարվել է առուների փորման աշխատանքներ:

11.Աղնջաձոր և Թառաթումբ գյուղերում կատարվել է փողոցային լույսերի վերանորոգման աշխատանքներ:

12.Շատին գյուղ «Աշարատեղ», «Դեմեր» և «Արիլի» կոչվող տեղամասեր տանող ճանապարհների նորոգման և փոսալցման աշխատանքներ:

13.Գողթանիկ գյուղում կատարվել է առուների նորոգման աշխատանքներ:

14.Սալլի գյուղի ՙԱրիլի՚ կոչվող տեղամասին հարակից այգիների ճանապարհների նորոգման աշխատանքներ:

15.Քարագլուխ գյուղում կատարվել է աղբանոցի ծածկման աշխատանքներ:
16.Քարագլուխ գյուղում կատարվել է խմելու ջրի ջրագծի նորոգման և առուների կառուցման աշխատանքներ:
17.Քարագլուխ գյուղում կատարվել է մարզամշակութային կենտրոնի հետնամասի գրունտի քանդման, բարձման և տեղափոխման աշխատանքներ:
18.Աղնջաձոր գյուղում կատարվել է մեղվանոց տանող ճանապարհի կառուցման աշխատանքներ:
19.Աղնջաձոր գյուղում կատարվել է դեպի ներքևի Քարավանատուն տանող ճանապարհի եզրին ջրահեռացման, կանավի փորման և ոռոգման ջրագծի ակունքի մաքրման աշխատանքներ:
20.Արտաբույնք գյուղում կատարվել է Ցալ սարի մակատեղիի /տավարի փարախի/ մաքրման և ճանապարհի նորոգման աշխատանքներ:
21.Սալլի գյուղում կատարվել է փողոցային լույսերի փոխարինման, ոռոգման ջրի առվի ճանապարհի հատման խողովակների տեղադրման, ծածկման և առվի կառուցման աշխատանքներ:
22.Սալլի գյուղում կատարվել է ճանապարհների կառուցման և հարթեցման աշխատանքներ:
23.Հորբատեղ գյուղում կատարվել է ճանապարհների կառուցման և շերենի հարթեցման աշխատանքներ:
24.Քարագլուխ գյուղում կատարվել է գյուղամիջյան և Թափայ հետև տեղամասի ճանապարհների նորոգման և հարթեցման աշխատանքներ:
25.Աղնջաձոր գյուղում կատարվել է գյուղամիջյան ճանապարհների լիցքով հարթեցման և վնասված ջրագծի նորոգման աշխատանքներ:
26.Քարագլուխ գյուղում կատարվել է ջրագծի երկու տեղամսի փորման, հետլիցքի և նորոգման աշխատանքներ:
27.Աղնջաձոր գյուղում կատարվել է վարչական շենքի տանիքի քանդման հետևանքով առաջացած աղբի տեղափոխման աշխատանքներ:
28.Շատին գյուղում կատարվել է Շատիվանք տեղամսի անասնափարախի մաքրման, գոմաղբի հեռացման և Շատիվանք տանող ճանապարհի կառուցման աշխատանքներ:
29.Եղեգիս գյուղում կատարվել է խմելու ջրագծի փորման, ծածկաման և ոռոգման ջրագծի ակունքի մաքրման, բարեկարգման աշխատանքներ:

30.Հորբատեղ գյուղում կատարվել է խմելու ջրագծի վթարված հատվածի վերանորոգման աշխատանքներ:

31.Քարագլուխ գյուղում կատարվել է խմելու ջրի ակունքի ճանապարհի սողանքի մաքրման, ճանապարհի նորոգման և 'Յուրդեր' տանող տեղամասի ճանապարհի նորոգման աշխատանքներ:

32.Շատին գյուղում կատարվել է ջրագծի վթարի նորոգման, և ճանապարհաեզրի առվի փորման, նորոգման աշխատանքներ:

33.Եղեգիս գյուղում կատարվել է լեշահորերի ծածկման համար գրունտի տեղափոխման աշխատանքներ:

34.Շատին գյուղի Հոստուն թաղամասում կատարվել է փողոցի առվի փորման և խողովակի քանդման, վերատեղադրման աշխատանքներ:

35.Շատին գյուղում կատարվել է առվի փորվածքի գրունտի տեղափոխման աշխատանքներ:

36.Շատին գյուղում կատարվել է գրունտային փողոցի փոսալցման, հարթեցման և վերանորոգման աշխատանքներ:

37.Իրականացվել է 'ՀՀ Վարչապետի Գավաթ' 2025 թվականի սիրողական խճուղային հեծանվավազքի մրցույթին մասնակցած մարզիկների և հեծանիվների տեղափոխման աշխատանքներ:

38.Աղնջաձոր,Սալլի և Արտաբույնք գյուղերում իականացվել են ոռոգման ջրագծի խողովակների զոդման, մետաղական պրոֆիլների, գեներատորի և բանվորների տեղափոխման աշխատանքներ:

39Քարագլուխ գյուղում կատարվել է մարզամշակութային կենտրոնի հետնամասի գրունտի քանդման, բարձման և տեղափոխման աշխատանքներ:

40.Եղեգիս գյուղում կատարվել է ոռոգման ջրի ակունքի մաքրման և նորոգման աշխատանքներ:

41.Հորս գյուղում կատարվել է լիճ տանող ճանապարհի հարակից ջրահեռացման կանավների փորման աշխատանքներ:

42.Վարդահովիտ գյուղում կատարվել է Սողանլու և Յայլաղատեղի տեղամասեր տանող ճանապարհների վերանորոգման աշխատանքներ:

43.Կատարվել է Հերմոն գյուղից դեպի Գողթանիկ գյուղ տանող ճանապարհի նորոգման և շերենապատման աշխատանքներ:

44.Վարդահովիտ գյուղում կատարվել է Սևաժայռ տանող համդամիջյան ճանապարհի

նորոգման աշխատանքներ:

45.Շատին գյուղում կատարվել է ճանապարհների նորոգման և շեբենապատման աշխատանքներ:

46.Աղնջաձոր գյուղում կատարվել է կենդանիների լեշահորերի փորման աշխատանքներ:

47.Թառաթումբ գյուղում կատարվել է ճանապարհների նորոգման և շեբենապատման աշխատանքներ:

48.Շատին գյուղում կատարվել է Հոստուն և Վանքի ձոր տանող ճանապարհների նորոգման և շեբենապատման աշխատանքներ:

49.Քարագլուխ գյուղում կատարվել է գերեզմաններ տանող ճանապարհի շեբենապատման և հարթեցման աշխատանքներ:

50.Քարագլուխ գյուղում կատարվել Քալլա հանդամաս տանող ճանապարհների նորոգման աշխատանքներ:

51.Հորբատեղ գյուղում կատարվել խմելու ջրագծի վթարված հատվածի վերականգնման աշխատանքներ:

52.Աղնջաձոր գյուղում կատարվել է Խաչքարեր տանող տեղամասի ճանապարհի նորոգման աշխատանքներ:

53.Եղեգիս գյուղում կատարվել է Յայլաղատեղի տեղամասի ոռոգման առվի նորոգման աշխատանքներ:

54.Թառաթումբ գյուղում կատարվել է Չատմա տեղամաս տանող ճանապարհի վերանորոգման աշխատանքներ:

55.Շատին գյուղում կատարվել է վարչական շենքին հարակից աղբամանների հարթակի կառուցման աշխատանքներ:

56.Արտաբույնք գյուղի Յալլ տեղամասում կատարվել է ոռոգման ջրի հավաքման կանավների փորման աշխատանքներ:

57.Թառաթումբ գյուղում կատարվել է Ջիլի, Վերին Յուրդ, Ներքնի Յուրդ տեղամասեր տանող ճանապարհների վերանորոգման աշխատանքներ:

58.Հորս գյուղում կատարվել է հանդամիջյան ճանապարհների նորոգման աշխատանքներ:

59.Քարագլուխ գյուղում կատարվել է Թախչիք տեղամասի փլվածքի մաքրման և անասնագոմերի մոտ գտնվող ջրահեռացման կանավների փորման աշխատանքներ:

Մասնակցային բյուջետավորման շրջանակներում արդեն ձեռք են բերվել նախագծանախահաշվային բոլոր փաստաթղթերը և շուտով կմեկնարկի շինարարական աշխատանքների ձեռքբերման մրցույթի ընթացակարգը:

*Կազմող՝ համայնքի տուրիզմի և տնտեսական զարգացման պատասխանատու՝*

*Առաջատար մասնագետ Սիլվա Խորենյան*

*Էլեկտրոնային փոստ՝ xorenyansilva@gmail.com*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 75Ա

*ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով՝

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1. Համաձայնություն տալ 2025 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված Եղեգիս համայնքի հողային հաշվեկշռին՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների (Ձև 22 և Ձև 22ա):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

| Կողմ -5 | Դեմ -2 | Ձեռնպահ -1 |
|---|---|---|
| ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ | ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ | ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐՄԵՆ |
| ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ | ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ | |
| ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ | | |
| ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ | | |
| ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ      ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված 1
Եղեգիս համայնքի ավագանու
15/08/2025թ. թիվ 75Ա որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
հողային ֆոնդի առկայության և բաշխման
(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների, առ 01/07/2025թ.)

Ձև N 22

Մարզ: Վայոց Ձոր (անվանում) — 10 (Կոդ)
Համայնք: Եղեգիս (անվանում) — 846 (Կոդ)

(հեկտարներով)

| NN | Նպատակային նշանակություն | Հողատեսք, գործառնական նշանակություն | Կոդի NN | Ընդամենը ¥2+3+4+8+12 | ՀՀ քաղաքացիների | ՀՀ իրավաբանական անձանց | համայնքային: ընդամենը (5+6+7) | համայնքային: օտարման ենթակա չէ | համայնքային: սեփականաշնորհման ենթակա | համայնքային: սեփականաշնորհման [illegible] ենթակա չէ | պետական: ընդամենը (9+10+11) | պետական: օտարման ենթակա չէ | պետական: սեփականաշնորհման ենթակա | պետական: սեփականաշնորհման և օտարման ենթակա չէ | Օտարերկրյա [illegible] |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1,1 | 1. Գյուղատնտեսական | վարելահող | | 1959,49 | 1066,33 | 2,52 | 880,34 | 1,14 | 143,33 | 735,87 | 10,30 | | | 10,30 | |
| 1,2 | | բազմ տնկարկներ, | | 93,73 | 88,65 | 1,55 | 3,53 | | 2,44 | 1,09 | | | | | |
| 1.2.1 | | այդ թվում[a] | | 81,77 | 78,09 | 0,15 | 3,53 | | 2,44 | 1,09 | | | | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | 11,96 | 10,56 | 1,40 | | | | | | | | | |
| 1.2.3 | | այլ բազմամյա | | | | | | | | | | | | | |
| 1,3 | | խոտհարք | | 1884,42 | 777,12 | 0,01 | 939,22 | 92,77 | 150,27 | 696,18 | 168,07 | | 45,00 | 123,07 | |
| 1,4 | | արոտ | | 24831,77 | 241,27 | 41,25 | 10672,48 | 3805,94 | 5989,11 | 877,43 | 13876,78 | 613,10 | 6882,92 | 6380,76 | |
| 1,5 | | այլ հողատեսքեր | | 14621,26 | 87,31 | 3,41 | 11079,73 | 3354,67 | 424,48 | 7300,58 | 3450,81 | 237,88 | 519,60 | 2693,33 | |
| 1 | | Ընդամենը | | 43390,67 | 2260,68 | 48,74 | 23575,29 | 7254,51 | 6709,63 | 9611,14 | 17505,96 | 850,98 | 7447,52 | 9207,46 | |
| 2,1 | 2.Բնակավայրերի | բնակելի | | 621,31 | 619,67 | 0,60 | 0,09 | | | 0,09 | | | | | 0,95 |
| 2.1.1 | | այդ թվում[a] | | 620,48 | 618,85 | 0,60 | 0,08 | | | 0,08 | | | | | 0,95 |
| 2.1.2 | | այգեգործական (ա | | | | | | | | | | | | | |
| 2,2 | | հասարակական | | 35,71 | 8,33 | 0,25 | 2,54 | 1,11 | | 1,43 | 24,52 | 3,31 | 0,35 | 20,86 | 0,07 |
| 2,3 | | խառը | | 0,12 | | | 0,12 | | | 0,12 | | | | | |
| 2,4 | | ընդհանուր | | 82,32 | | | 82,32 | | | 82,32 | | | | | |
| 2,5 | | այլ հողեր | | 133,27 | 2,84 | | 130,43 | | 0,30 | 130,13 | | | | | |
| 2 | | Ընդամենը | | 872,73 | 630,85 | 0,85 | 215,50 | 1,11 | 0,30 | 214,09 | 24,52 | 3,31 | 0,35 | 20,86 | 1,02 |
| 3,1 | 3. Արդյունաբ., ընդերքօգտ. | արդյունաբերության | | 1,71 | 0,04 | | 1,67 | | | 1,67 | | | | | |
| 3,2 | | գյուղատնտեսական, | | 28,94 | 3,53 | | 24,41 | | 0,78 | 23,63 | | | | | 1,00 |
| 3,3 | | պահեստարանների | | 0,07 | | | 0,07 | | | 0,07 | | | | | |
| 3,4 | | ընդերք | | 24,23 | | | | | | | 24,23 | | | 24,23 | |
| 3 | | Ընդամենը | | 54,95 | 3,57 | | 26,15 | | 0,78 | 25,37 | 24,23 | | | 24,23 | 1,00 |
| 4,1 | 4.Էներգետիկայի, կապի, տրանսպորտի | Էներգետիկայի | | 13,63 | 1,49 | 8,62 | 3,42 | | 1,66 | 1,76 | 0,10 | | 0,10 | | |
| 4,2 | | կապի | | 0,61 | 0,04 | 0,12 | 0,45 | | 0,05 | 0,40 | | | | | |
| 4,3 | | տրանսպորտի | | 44,21 | | 0,01 | | | | | 44,20 | | | 44,20 | |
| 4,4 | | կոմունալ | | 18,12 | | 6,43 | 3,00 | | 1,19 | 1,81 | 8,69 | | 6,43 | 2,26 | |
| 4 | | Ընդամենը | | 76,57 | 1,53 | 15,18 | 6,87 | | 2,90 | 3,97 | 52,99 | | 6,53 | 46,46 | |
| 5,1 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | բնապահպանական | | | | | | | | | | | | | |
| 5.1.1 | | այդ թվում[a] արգելոցն | | | | | | | | | | | | | |
| 5.1.2 | | | | | | | | | | | | | | | |
| 5.1.3 | | ազգային | | | | | | | | | | | | | |
| 5,2 | | առողջարարական | | | | | | | | | | | | | |
| 5,3 | | հանգստի | | 0,79 | | | 0,79 | | | 0,79 | | | | | |
| 5,4 | | պատմական և | | 100,60 | | | 22,46 | | | 22,46 | 78,14 | 2,35 | | 75,79 | |
| 5 | | Ընդամենը | | 101,39 | | | 23,25 | | | 23,25 | 78,14 | 2,35 | | 75,79 | |
| 6 | 6.Հատուկ նշանակության | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| 7,1 | 7. Անտառային | անտառ | | 2465,29 | | | | | | | 2465,29 | 0,37 | 1,37 | 2463,55 | |
| 7,2 | | թփուտ | | 96,50 | | | | | | | 96,50 | | | 96,50 | |
| 7,3 | | վարելահող | | | | | | | | | | | | | |
| 7,4 | | խոտհարք | | 35,26 | | | | | | | 35,26 | | | 35,26 | |
| 7,5 | | արոտ | | 286,12 | | | | | | | 286,12 | | | 286,12 | |
| 7,6 | | այլ հողեր | | 91,13 | | | | | | | 91,13 | | | 91,13 | |
| 7 | | Ընդամենը | | 2974,30 | | | | | | | 2974,30 | 0,37 | 1,37 | 2972,56 | |
| 8,1 | 8. Ջրային | գետեր | | 125,47 | | | | | | | 125,47 | | 0,03 | 125,44 | |
| 8,2 | | ջրամբարներ | | 14,48 | | | 14,48 | | | 14,48 | | | | | |
| 8,3 | | լճեր | | 6,71 | 0,07 | | 6,64 | | | 6,64 | | | | | |
| 8,4 | | ջրանցքներ | | 45,09 | | | 44,61 | | 0,10 | 44,51 | 0,48 | | | 0,48 | |
| 8,5 | | հիդրոտեխ. և | | 1,09 | | | 1,09 | | 0,28 | 0,81 | | | | | |
| 8 | | Ընդամենը | | 192,84 | 0,07 | | 66,82 | | 0,38 | 66,44 | 125,95 | | 0,03 | 125,92 | |
| 9,1 | 9. Պահուստային | աղուտներ | | | | | | | | | | | | | |
| 9,2 | | ավազուտներ | | | | | | | | | | | | | |
| 9,3 | | ճահիճներ | | | | | | | | | | | | | |
| 9,4 | | | | | | | | | | | | | | | |
| 9,5 | | այլ անօգտագործելի | | | | | | | | | | | | | |
| 9 | | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՀՈՂԵՐ | | | | 47663,46 | 2896,69 | 64,77 | 23913,89 | 7255,62 | 6713,99 | 9944,27 | 20786,09 | 857,01 | 7455,80 | 12473,28 | 2,02 |

Համայնքի ղեկավար [illegible]

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ • 08914317

Ա. [illegible]

Հավելված 2
Եղեգիս համայնքի ավագանու
15/08/2025թ. թիվ 75Ա որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ձև 22ա

## Հայաստանի Հանրապետության ոռոգվող հողերի առկայության և բաշխման

(ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների)

| | | |
|---|---|---|
| Մարզ[a] | Վայոց Ձոր (անվանումը) | 10 (կոդ) |
| Համայնք[a] | Եղեգիս (անվանումը) | 846 (կոդ) |

| NN | Նպատակային նշանակություն | Գործառնական նշանակություն, հողատեսք | Կոդ N/N | Ընդամենը ոռոգվող հողեր ¥2+3+4+5+6¤ | Սեփականության սուբյեկտ: ՀՀ պետական | ՀՀ համայնքային | Քաղաքացիների | Իրավաբանական անձանց | Օտարերկրյա |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ա | Բ | Գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 1,1 | 1. Գյուղատնտեսական | վարելահող | | 487,9 | 365,1 | 2,5 | 120,3 | | |
| 1,2 | | բազմամյա տնկարկներ, ընդամենը | | 93,9 | 88,8 | 1,6 | 3,6 | | |
| 1.2.1 | | այդ թվում[a] պտղատու այգի | | 81,9 | 78,1 | 0,2 | 3,6 | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | 12,0 | 10,6 | 1,4 | | | |
| 1.2.3 | | այլ | | | | | | | |
| 1,3 | | խոտհարք | | 69,2 | 41,4 | | 27,8 | | |
| 1,4 | | արոտ | | | | | | | |
| 1,5 | | այլ հողատեսքեր | | | | | | | |
| 1 | | Ընդամենը (1.1+1.2+1.3+1.4+1.5) | | 650,9 | 495,2 | 4,1 | 151,7 | | |
| 2,1 | 2.Բնակավայրերի | բնակելի կառուցապատման | | 327,7 | 327,7 | | | | |
| 2.1.1 | | այդ թվում տնամերձ հողեր | | 327,7 | 327,7 | | | | |
| 2.1.2 | | այգեգործական (ամառանոցային) | | | | | | | |
| 2,2 | | ընդհանուր օգտագործման | | | | | | | |
| 2,3 | | այլ հողեր | | | | | | | |
| 2 | | Ընդամենը (2.1+2.2+2.3) | | 327,7 | 327,7 | | | | |
| 3 | 3. Արդյունաբ., ընդերքօգտ., և այլ արտ. նշանակության | | | | | | | | |
| 4 | 4. Էներգետիկայի, տրանսպ., կապի, կոմունալ ենթակառուցվածքների | | | | | | | | |
| 5 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | | | | | | | | |
| 6 | 6. Հատուկ նշանակության | | | | | | | | |
| 7,1 | 7. Անտառային | անտառ | | | | | | | |
| 7,2 | | թփուտ | | | | | | | |
| 7,3 | | վարելահող | | | | | | | |
| 7,4 | | խոտհարք | | | | | | | |
| 7,5 | | արոտ | | | | | | | |
| 7,6 | | այլ հողեր | | | | | | | |
| 7 | | Ընդամենը (3.1+3.2+3.3+3.4+3.5+3.6) | | | | | | | |
| 8 | 8. Ջրային | | | | | | | | |
| 9 | 9. Պահուստային | | | | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ ՈՌՈԳՎՈՂ ՀՈՂԵՐ ¥1+2+3+4+5+6+7+9¤ | | | | 978,6 | 822,9 | 4,1 | 151,7 | | |

Համայնքի ղեկավար ______ /ստորագրություն, կնիք/

կատարող՝ ______ /ստորագրություն/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ «ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ ՀՎՀՀ 08914317

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 76Ա

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028Թ.Թ. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2026-2028թ.թ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածների:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -1

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ՍՄԲԱՏՅԱՆ ՍԱՄԻԿՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

**Հավելված 1**

Եղեգիս համայնքի ավագանու

15-ը օգոստոսի 2025թ. N 76 Ա որոշման

# ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 - 2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ



## ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի եկամուտները և ծախսային քաղաքականությունը շարադրող մասեր

## Բովանդակություն


Ներածություն ....................................................................................................2

Զարգացման հիմնական ուղղությունները և սկզբունքները ..........................................3

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2026-2028. միջնաժամկետ ծախսերի ծրագրերի կանխատեսվող եկամուտները.............................................................5

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Եկամուտների վերծանումը ըստ առանձին տեսակների .....................................................................................................6

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի համայնքի 2026-2028թթ. կանխատեսվող ծախսերը ............................................................................................................6

Բյուջետային ծախսերի կանխատեսումը ըստ ոլորտների .........................................9

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2026-2028 թթ. Բյուջեի գործառնական դասակարգումը տոկոսային հարաբերությամբ .........................................10

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2026-2028թթ. կանխատեսվող դեֆիցիտը......................................................................................................12


## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի կողմից կատարվող հանրային լսումներից ելնելով հիմնվում ենք պահանջվող և ակնկալվող ծրագրերի վրա կազմվում է 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) հանդիսանում է

Եղեգիս համայնքի 2026-2028թթ միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը, հիմնվելով վերջինիս վրա կազմվում է հաջորդ տարվա տարեկան բյուջեն:

ՄԺԾԾ-ով ներկայացվում է կանխատեսվող Եղեգիս համայնքի հաջորդող 3 տարիների եկամուտները, դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները, ծախսային ուղղությունները ըստ ոլորտների, որոնք բերելու են Եղեգիս համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև կընձեռնեն համայնքին առավել արդյունավետ եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որը իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը:

ՄԺԾԾ-ն կնպաստի ավելի լայն և հեռանկարային ֆինանսական ծախսերի քաղաքականության մշակմանը, որի շնորհիվ համայնքի զարգացման հեռանկարը կստանա բյուջետային ձևաչափ և որը ըստ էության հասանելի կդարձնի բոլորին՝ այդ թվում քաղաքացիներին, ուսումնասիրելու միջնաժամկետ կտրվածքով համայնքի կողմից նախատեսվող ծախսերի բաշխումը ըստ ոլորտների՝ թվային տեսքով, ընդ որում սույն ֆինանսական փաստաթղթով առավել կընդգծվի բյուջետային ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմները:

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը նախագծվել է ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» և «տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով:

## ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2026-2028թթ. համար ՄԺԾԾ ծրագրերի իրականացումը նպատակաուղղվելու է համաչափ և կայուն զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
2. Շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:

4. Բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների, քննարկումների և քվեարկությունների միջոցով:

5. Առողջ, անվտանգ և հարմարավետ ապրելու և գործելու միջավայրի ստեղծումը:

6. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:

7. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանումը Շատին - Եղեգիս-Արատես և դեպի Շատին -Վարդենյանց լեռնանցք ուղղություններով համայնքի զբոսաշրջային միջավայրի բարելավումը:

8. ՎՁՄ Եղեգիս համայնքում կրթական և համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

9. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում:

10. Տարբեր միջազգային ծրագրերին և միություններին մասնակցության ապահովումը:

11. ՎՁՄ Եղեգիս համայնքի ճանապարհների ճանապարհաշինարարական լայնածավալ ծրագրերի շարունակականության ապահովումը:

12. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը, համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացումը:

13. Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը:

14. Երեխաների իրավունքների պաշտպանությունն ու անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավումը:

15. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028. ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Եղեգիս համայնքի 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրերի եկամուտները կանխատեսվել են համապատասխանաբար՝ 554500,0,569900,0, և 594600.0 հազ. դրամ: Եկամուտների կազմում աճ է նախատեսվում գրեթե բոլոր բյուջետային բաժիններում և խմբերում: Եղեգիս համայնքի սեփական եկամուտների դինամիկան, հիմնականում պայմանավորված է ՀՀ Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների կիրառմամբ, որի արդյունքում միջնաժամկետ կտրվածով սեփական եկամուտների կազմում հիմնանական աճը նախատեսվում ն է գույքահարկի և անշարժ գույքի հարկի մասով եկամտատեսակից:



## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԵՐԾԱՆՈՒՄԸ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2026-2028թթ. եկամուտների կազմում՝ սեփական եկամուտների ցուցանիշը համապատասխանաբար կազմում է 414500,0, 424900,0 և 439600,0 հազ. դրամ 2026-2028թթ. ՄԺԾԾ-ով սեփական եկամուտների կազմում էապես աճող եկամտատեսակներն են՝

- Գույքահարկ անշարժ գույքի մասով համապատասխանաբար՝ 15000,0,17900,0 և 19100,0 հազ. դրամ
- Գույքահարկ փոխադրամիջոցների մասով՝ 39000,0,40000,0, և 42000,0 հազ. դրամ
- Գույքի վարձակալությունից եկամուտներ՝ 23500, 24000 և 24000 հազ. դրամ
- Վարչական գանձումներ՝ 24500,0, 25000,0 և 25000,0 հազ. դրամ, որից՝
- Աղբահանության վճարներ՝ 14000, 15000 և 16000 հազ. դրամ
- Պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիան, նախնական կանխատեսմամբ նախատեսվում է մոտ 2% աճ, իսկ պետության կողմից ՎՁՄ Եղեգիս համայնքին պատվիրակված լիազորությունների կատարման համար տրվող հատկացումը կանխատեսվում է համապատասխանաբար՝ 315000,0, 320000,0 և 330000,0, հազ. դրամ
- Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով հատկացումներ սուբվենցիաներ՝ կանխատեսվում է 100000,0 հազ. դրամ յուրաքնչյուր տարվա համար:

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028ԹԹ. ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԾԱԽՍԵՐԸ

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2026-2028թթ. ծախսերը կանխատեսվում են

համապատասխանաբար՝ 554500,0, 569900,0 և 594600,0 հազ. դրամ և միտված են համայնքի համաչափ և կայուն զարգացմանը: Ծախսերի քաղաքականության և նպատակներին հասնելու սկզբնաղբյուրն է հանդիսանում Եղեգիսի համայնքապետարանի պահպանման ծախսերի համատեքստում ստանալ այնպիսի մարդկային ռեսուրս, որը ի վիճակի կլինի համապատասխան ծառայությունները մատուցել՝ լուծելով համայնքի առջև դրված կայուն զարգացման պահանջը: Ծախսային մասը նախագծվել է հետևելով բյուջետային հաշվեկշռվածության սկզբունքին՝ ապահովելով բյուջեների կառուցման ստանդարտները և ներկայացնելով այն ըստ գործառական և տնտեսագիտական դասակարգումների, ինչպես նաև ըստ առանձին ծրագրերի:

Ընդհանուր ծախսերը ըստ բյուջետային տնտեսագիտական դասակարգման բնույթների կարելի է նկարագրել հետևյալ խմբերով.

- Աշխատանք և նրան հավասարեցված վճարումների վարձատրություն՝

  154000,0,157000,0 և 157000 հազ. դրամ
- Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում՝

  104720,0, 129500, 162950,0 հազ. դրամ
- Սուբսիդիաներ՝21000, 19000, 19000 ,0 հազ. դրամ
- Նպաստներ՝ 7000,0, 7000,0, 7000,0 հազ. դրամ
- Այլ ծախսեր՝ 127833.7, 96000, 85650 հազ. դրամ
- Հիմնական միջոցներ՝ 131850, 161000, 163000 հազ. դրամ

## ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028ԹԹ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ
## ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԻ



## ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

Կանխատեսվող բյուջետային ծախսերի բաշխման ոլորտային սկզբունքը կայանում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի համաչափ զարգացման և ոլորտային ուսումնասիրությունների արդյունքում առաջացած խնդիրների լուծման տեսլականներով, և այն առավել մատչելի ձևով ներկայացված է բյուջետային դասակարգման գործառական խմբերում, մասնավորապես դրանք ըստ բաժինների բաշխված են հետևյալ կերպ.

- Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ համապատասխանաբար՝ 242250, 268400 և 280450 հազ. դրամ
- Պաշտպանություն՝ 2600,0,2500,0,2500,0հազ դրամ յուրաքանչյուր տարի.
- Տնտեսական հարաբերություններ՝ 92650, 103000 և 108000 հազ. դրամ
- Շրջակա միջավայրի պաշտպանություն՝ 15700, 17500 և 19000 հազ. դրամ
- Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություն՝60250, 74800, 78000հազ. դրամ
- Հանգիստ, մշակույթ և կրոն՝23400, 25800,0 27000,0հազ. դրամ
- Սոցիալական պաշտպանություն՝ 7000,0,7000.0,7500.0 հազ. Դրամ
- Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր՝ 108850,0, 70900,0 և 72650

## ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹԹ. ԲՅՈՒՋԵԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ

### 2026




### 2027




2028
Кв. 1
Кв. 2
Кв. 3
Кв. 4
Кв. 5
Кв. 6
Кв. 7
Кв. 8
Кв. 9
Кв. 10
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ
Պաշտպանություն
Տնտեսական հարաբերություններ
Շրջակա միջավայրի պաշտպանություն
Բնակարանային շինարարություն
Առողջապահություն
Հանգիստ, մշակույթ և կրոն
Կրթություն
Սոցիալական պաշտպանություն
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր

# ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028ԹԹ. ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԴԵՖԻՑԻՏԸ

2026-2028թթ կանխատեսվող դեֆիցիտի կամ հավելուրդի ֆինանսավորման աղբյուրների կազմում արտացոլված են՝ ներգրավված վարչական մասից ֆոնդային մաս անցնող և հենց ֆոնդային մասում կանխատեսվող բյուջետային միջոցները, ինչպես նաև Եղեգիս համայնքի միջնաժամկետ ծախսերի ծրագրերի ընդհանուր պատկերով 2026-2028թթ. կանխատեսվող դեֆիցիտը կազմում է 100000,0, 100000,0 և 100 000 հազ. դրամ:

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ / / Ա.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված N 2, Եղեգիս համայնքի ավագանու
15-ը օգոստոսի 2025թ. N 76 Ա որոշման

ՀՀ համայնքների միջնաժամկետ ծախսերի ծրագրի 2026-2028թթ. վարչական և ֆոնդային մասերի եկամուտները՝ ըստ ձևավորման աղբյուրների

(հազար դրամներով)

| Տողի NN | Եկամուտատեսակները | Հոդվածի NN | 2024 փաստացի | | | 2025 հաստատված | | | 2026 թվական | | | 2026թ կանխատեսված և 2025թ. հաստատված բյուջեի տարբերություն | | | 2027 թվական | | | 2028 թվական | | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | 2025թ կանխատեսված և 2024թ. հաստատված բյուջեի տարբերության վերաբերյալ հիմնավորումներ |
| | | | | վարչական բյուջե | ֆոնդայի ն բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդայ ին բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդա յին բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդ ային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ | | 346566,5 | 346566,5 | | 386165,5 | 386165,5 | | 414 500,0 | 414 500,0 | | 28 334,5 | 28 334,5 | | 424 900,0 | 424 900,0 | | 594 600,0 | 439 600,0 | 155 000,0 | ապառքների ներգրավում և կանխատեսվող դոտացիայի աճ |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1100 | 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ (տող 1110 + տող 1120 + տող 1130 +տող1140+ տող 1150 ), այդ թվում՝ | 7100 | 45000 | 45000 | | 50000 | 50000 | | 55 000,0 | 55 000,0 | | 5 000,0 | 5 000,0 | | 58 900,0 | 58 900,0 | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1110 | 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից (տող 1111 + տող 1112+տող1113), այդ թվում՝ | 7131 | 11000 | 11000 | | 13000 | 13000 | | 15 000,0 | 15 000,0 | | 2 000,0 | 2 000,0 | | 17 900,0 | 17 900,0 | | 19 100,0 | 19 100,0 | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | անշարժ գույքի հարկ շենքերից | | 8600 | 8600 | | 11000 | 11000 | | 13 000,0 | 1 300,0 | | 2 000,0 | 2 000,0 | 28 334,5 | 16 000,0 | 16 000,0 | | 17 000,0 | 17 000,0 | | |
| 1111 | Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար | | 200 | 200 | | 200 | 200 | | 400 | 400,0 | | | | | 500 | 500,0 | | 600 | 600,0 | | |
| 1112 | Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար | | 2200 | 2200 | | 1800 | 1800 | | 1 600,0 | 1 600,0 | | | | | 1 400,0 | 1 400,0 | | 1 500,0 | 1 500,0 | | |
| 1113 | Համայնքի բյուջե մուտքագրվող անշարժ գույքի հարկ | | 8200 | 8200 | | | | | | | | | | | | | | | | | |
| 1120 | 1.2 Գույքային հարկեր այլ գույքից | 7136 | 33000 | 33000 | | 36000 | 36000 | | 39 000,0 | 39 000,0 | | 3 000,0 | 3 000,0 | | 40 000,0 | 40 000,0 | | 42 000,0 | 42 000,0 | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1121 | Գույքահարկ փոխադրամիջոցների համար | | 33000 | 33000 | | 36000 | 36000 | | 39 000,0 | 39 000,0 | | 3 000,0 | 3 000,0 | | 40 000,0 | 40 000,0 | | 42 000,0 | 42 000,0 | | |
| 1130 | 1.3 Տեղական տուրքեր (տող 11301 + տող 11302 + տող 11303 + տող 11304 + տող 11305 + տող 11306 + տող 11307 + տող 11308 + տող 11309 + տող 11310 + տող 11311+տող 11312+ տող 11313 + տող 11314+տող 11315+ տող 11316 + տող 11317+ տող 11318 + տող 11319), այդ թվում՝ | 7145 | 1000 | 1000 | | 1000 | 1000 | | 1 000,0 | 1 000,0 | | 0,0 | 0,0 | | 1 000,0 | 1 000,0 | | 1 000,0 | 1 000,0 | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11301 | Համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) թույլտվության համար | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11302 | Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման և բարեկարգման աշխատանքներ կատարելու թույլտվության համար | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11303 | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11304 | Համայնքի վարչ. տարածքում, սահմանամերձ բարձրլեռն. համայնք-ի վարչ. տարածքում, բացառ. միջպետ. և հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի կողեզրում, խանութ-ում և կրպակ-երում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվ. համար | | | | | | | | | | | | | | | | | | |
| | Համայնքի վարչ. տարածքում, սահմանամերձ բարձրլեռն. համայնք-ի վարչ. տարածքում, բացառ. միջպետ. և հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի կողեզրում, խանութ-ում և կրպակ-երում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկ. նավթ . գազ-ի վաճառքի թույլտվ. համար | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11305 | Համայնքի վարչական տարածքում, սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11306 | Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11307 | Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11308 | Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11309 | Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11310 | Համայնքի վարչական տարածքում համայնքային կանոններին համապատասխան հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11311 | Քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ, սահմանված կարգին համապատասխան, տնային կենդանիներ պահելու թույլտվության համար | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11312 | Ավագանու սահմանվ. կարգին ու պայման-ին համ. համայնքի վարչ. տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվ. համար, բացառ. միջպետ. ու հանրապետ. նշանակ. ավտոմոբիլ. ճանապարհ-ի օտարման շերտերում և պաշտպ. գոտի-ում տեղադ. գովազդ-ի թույլտվ-ի (բացառ. Երևան քաղաքի) | | | | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11313 | Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվ. համար | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11314 | Համայնքի վարչական տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11315 | Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11317 | Համայնքի վարչական տարածքում տեխնիկական և հատուկ նշանակության հրավառություն իրականացնելու թույլտվության համար | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11318 | Համայնքի տարածքում սահմանափակման ենթակա ծառայության օբյեկտի գործունեության թույլտվության համար | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 11319 | Այլ տեղական տուրքեր | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1140 | 1.4 Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր (տող 1141 + տող 1142), այդ թվում՝ | 7146 | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1141 | Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1142 | Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթ. պատճեն. հանելու և դրանցից քաղվածք. տալու համար | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1200 | 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ (տող 1210 + տող 1220 + տող 1230 + տող 1240 + տող 1250 + տող 1260), այդ թվում՝ | 7300 | 262566,5 | 262566,5 | | 295881,5 | 295881,5 | | 315 000,0 | 315 000,0 | | 19 118,5 | 19 118,5 | | 320 000,0 | 320 000,0 | | 330 000,0 | 330 000,0 | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1230 | 2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից | 7321 | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1231 | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1240 | 2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից | 7322 | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1241 | Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1250 | 2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1251 + տող 1252 + տող 1255 + տող 1256), որից՝ | 7331 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1251 | Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | | 262566,5 | 262566,5 | | 295881,5 | 295881,5 | | 315 000,0 | 315 000,0 | | 19 118,5 | 19 118,5 | | 320 000,0 | 320 000,0 | | | | | |
| 1255 | Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1260 | 2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1261 + տող 1262), այդ թվում՝ | 7332 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1261 | Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1300 | 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1310 + տող 1320 + տող 1330 + տող 1340 + տող 1350 + տող 1360 + տող 1370 + տող 1380 + տող 1390), այդ թվում՝ | 7400 | 39000 | 39000 | | 40284 | 40284 | | 44 500,0 | 44 500,0 | | 4 216,0 | 4 216,0 | | 46 000,0 | 46 000,0 | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1320 | 3.2 Շահաբաժիններ, այդ թվում՝ | 7412 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1321 | Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող մասհանումներ (շահաբաժիններ) | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1330 | 3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ (տող 1331 + տող 1332 + տող 1333 + տող 1334), այդ թվում՝ | 7415 | 15000 | 15000 | | 22484 | 22484 | | 23 500,0 | 23 500,0 | | 1 016,0 | 1 016,0 | | 24 000,0 | 24 000,0 | | 24 000,0 | 24 000,0 | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1331 | Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձավճարներ | | 9400 | 9400 | | 10300 | 10300 | | 10 500,0 | 10 500,0 | | 200,0 | 200,0 | | 11 000,0 | 11 000,0 | | 11 000,0 | 11 000,0 | | |
| 1333 | Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ | | 5600 | 5600 | | 12184 | 12184 | | 13 000,0 | 13 000,0 | | 816,0 | 816,0 | | 13 000,0 | 13 000,0 | | 13 000,0 | 13 000,0 | | |
| 1334 | Այլ գույքի վարձակալությունից մուտքեր | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1340 | 3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից (տող 1341 + տող 1342+ տող 1343), այդ թվում՝ | 7421 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1342 | Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1350 | 3.5 Վարչական գանձումներ (տող 1351 + տող 1352+տող 1353), այդ թվում՝ | 7422 | 16000 | 16000 | | 11800 | 11800 | | 14 000,0 | 14 000,0 | | 2 200,0 | 2 200,0 | | 22 000,0 | 22 000,0 | | 23 500,0 | 23 500,0 | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1351 | Տեղական վճարներ (տող13501+տող13502+տող13503+տող13504+տող13505+տող13506+տող13507+տող13508+տող13509+տող13510+տող13511+տող13512+տող13513+տող13514+տող13515+տող13516+տող13517+տող13518+տող13519+տող13520) , այդ թվում՝ | | 16000 | 16000 | | 11800 | 11800 | | 14 000,0 | 14 000,0 | | 2 200,0 | 2 200,0 | | 15 000,0 | 15 000,0 | | 16 000,0 | 16 000,0 | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 13501 | 1.աղբահանություն | | 14200 | 14200 | | 10000 | 10000 | | 12 000,0 | 12 000,0 | | 2 000,0 | 2 000,0 | | 13 000,0 | 13 000,0 | | 14 000,0 | 14 000,0 | | |
| 13502 | 2.գանձումներ խմելու ջրից | | 1800 | 1800 | | 1800 | 1800 | | 2 000,0 | 2 000,0 | | 200,0 | 200,0 | | 2 000,0 | 2 000,0 | | 2 000,0 | 2 000,0 | | |
| 13503 | Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 13504 | Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 13505 | Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 13507 | Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | գանձումներ խմելու ջրի վարձավճարներից | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 13508 | Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 13512 | Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 13513 | Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայություններից օգտվողների համար | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 13514 | Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 13516 | Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 13517 | Համայնք. սեփ. հանդ-ող ընդհանուր օգտագործ. փողոց-ում և հրապարակ-ում (բաց. բակային տարածք-ի, ուսումն., կրթ., մշակույթ. և առողջ. հաստատ-երի, պետ. կառավարման և տեղ. ինքնակառ. մարմին-ի վարչ. շենք-ի հարակից տարածք-ի) ավտոտր. միջոցն ավտոկայանատ. կայանելու համար | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13518 | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 13519 | Համայնքին սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 13520 | Այլ տեղական վճարներ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1352 | Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1360 | 3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից (տող 1361 + տող 1362) այդ թվում՝ | 7431 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1361 | Վարչական իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1362 | Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1370 | 3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ (տող 1371 + տող 1372), այդ թվում՝ | 7441 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1372 | Ֆիզ. անձ. և կազմակերպ. նվիրատ. համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմն. տնօրինմանն անցած գույքի (հիմն.միջոց կամ ոչ նյութ. ակտիվ չհանդիս.) իրացումից և դրամական միջոցներից ընթ. ծախսերի ֆինանս. համար համայնքի բյուջե ստաց. մուտքեր՝ տրամադր. ներքին աղբ. | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1380 | 3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ (տող 1381 + տող 1382), այդ թվում՝ | 7442 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1381 | Նվիրատվ,ժառանգ.իրավ.ֆիզիկ.անձ.և կազմակ.համայնք,վերջ.ենթ.բյուջետ.հիմնարկ.տնօրին.անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրաց.և դրամ.միջոց.կապիտալ ծախսերի ֆինանս.համ.համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադ.արտաքին աղբյուր. | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1390 | 3.9 Այլ եկամուտներ (տող 1391 + տող 1392 + տող 1393), այդ թվում՝ | 7451 | 8000 | 8000 | | 6000 | 6000 | | 7 000,0 | 7 000,0 | | 1 000,0 | 1 000,0 | | 7 000,0 | 7 000,0 | | 7 500,0 | 7 500,0 | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1391 | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1392 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1393 | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | | 8000 | 8000 | | 6000 | 6000 | | 7 000,0 | 7 000,0 | | 1 000,0 | 1 000,0 | | 7 000,0 | 7 000,0 | | 7 500,0 | 7 500,0 | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված N 3, Եղեգիս համայնքի ավագանու
15-ը օգոստոսի 2025թ. N 76 Ա որոշման

ՀՀ համայնքների 2026-2028թ.թ. միջնաժամկետ ծախսերի ծրագրերի պակացուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորումը ըստ աղբյուրների

(հազար դրամներով)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | 2023 փաստացի | | | 2024 հաստատված | | | 2025 թվական | | | 2025թ կանխատեսված և 2024թ. հաստատված բյուջեի տարբերություն | | | 2026 թվական | | | 2027 թվական | | | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | Ընդամենը | այդ թվում՝ | | 2025թ կանխատեսված և 2024թ. հաստատված բյուջեի տարբերության վերաբերյալ հիմնավորումներ |
| | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 |
| 8010 | *ԸՆԴԱՄԵՆԸ՝* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8100 | *Ա. ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8110 | *1. ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8120 | 1.2. Վարկեր և փոխատվություններ (ստացում և մարում) | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8121 | 1.2.1. Վարկեր | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8122 | - վարկերի ստացում | 9112 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | որից՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8124 | *այլ աղբյուրներից* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8160 | *2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8161 | 2.1. Բաժնետոմսեր և կապիտալում այլ մասնակցություն | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8164 | *Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռք բերում* | 6213 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8190 | *2.3. Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը՝* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8191 | 2.3.1. Համայնքի բյուջեի վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդ | 9320 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | որից` | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8192 | *- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի վարչական մասից նախորդ տարում ֆինանսավորման ենթակա, սակայն չֆինանսավորված` առկա պարտավորությունների կատարմանը* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8193 | *- ենթակա է ուղղման համայնքի բյուջեի ֆոնդային մաս* | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8194 | 2.3.2. Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցների տարեսկզբի մնացորդ | 9330 | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | որից` | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 8195 | *- առանց վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա* | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8196 | *- վարչական մասի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդից ֆոնդային մաս մուտքագրման ենթակա գումարը* | | | | | | | | | | | | | | | | | | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված N 4, Եղեգիս համայնքի ավագանու
15-ը օգոստոսի 2025թ. N 76 Ա որոշման

ՀՀ համայնքների 2026-2028թ.թ. միջնաժամկետ ծախսերի ծրագրերի վարչական և ֆոնդային մասերի տարեկան հատկացումները ըստ՝ բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի և տնտեսագիտական դասակարգման հոդվածների

(հազար դրամներով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | | 2024 փաստացի. Ընդամենը | 2024 այդ թվում՝ վարչական բյուջե | 2024 այդ թվում՝ ֆոնդային բյուջե | 2025 հաստատված. Ընդամենը | 2025 այդ թվում՝ վարչական բյուջե | 2025 այդ թվում՝ ֆոնդային բյուջե | 2026 թվական. Ընդամենը | 2026 այդ թվում՝ վարչական բյուջե | 2026 այդ թվում՝ ֆոնդային բյուջե | 2026թ կանխատեսված և 2025թ. հաստատված բյուջեի տարբերություն. Ընդամենը | այդ թվում՝ վարչական բյուջե | այդ թվում՝ ֆոնդային բյուջե | 2027 թվական. Ընդամենը | 2027 այդ թվում՝ վարչական բյուջե | 2027 այդ թվում՝ ֆոնդային բյուջե | 2028 թվական. Ընդամենը | 2028 այդ թվում՝ վարչական բյուջե | 2028 այդ թվում՝ ֆոնդային բյուջե | Ծանոթություն. 2026թ կանխատեսված և 2025թ. հաստատված բյուջեի տարբերության վերաբերյալ հիմնավորումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 22 |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ | | 446 553,2 | 346 566,5 | 99 986,7 | 546 403,7 | 414 553,7 | 131 850,0 | 554 500,0 | 414 500,0 | 140 000,0 | 8 096,3 | (53,0) | 8 150,0 | 569 900,0 | 408 900,0 | 161 000,0 | 594 600,0 | 431 600,0 | 163 000,0 | կանխատեսվող ապառքների |
| 2100 | 01 | 0 | 0 | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | 208 680,0 | 182 190,0 | 26 490,00 | 253 440,0 | 209 540,0 | 43 900,0 | 242 250,0 | 210 750,0 | 31 500,0 | (11 190,0) | 11 670,0 | (12 400,0) | 268 400,0 | 234 900,0 | 35 000,0 | 280 450,0 | 243 450,0 | 37 000,0 | հավաքագրում և հնարավոր |
| | | | | այդ թվում՝ օրենսդիր և գործադիր մարմիններ | | 186 290,0 | 160 790,0 | 25 500,0 | 213 540,0 | 182 640,0 | 30 900,0 | 215 850,0 | 185 300,0 | 30 550,0 | 2 310,0 | 2 660,0 | | 216 400,0 | 189 400,0 | 27 000,0 | 220 950,0 | 191 950,0 | 29 000,0 | օրենսդրական դաշտի փոփոխություններ |
| ... | .. | . | . | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| ... | .. | . | . | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | 1 | 3 | 0,0 | ընդհանուր բնույթի ծառ | | 1500 | 1500 | | 2000 | 2000 | | 2 000,0 | 2 000,0 | | | | | 2 000,0 | 2 000,0 | | 2 500,0 | 2 500,0 | | |
| | 1 | 3 | 3,0 | ընդհանուր բնույթի այլ ծառ | | 1500 | 1500 | | 2000 | 2000 | | 2 000,0 | 2 000,0 | | | | | 2 000,0 | 2 000,0 | | 2 500,0 | 2 500,0 | | |
| | 1 | 6 | 0,0 | ընդհանուր բնույթի հանրային ծառ | | 20890 | 19900 | 990 | 37900 | 24900 | 13000 | 24 400,0 | 23 450,0 | 950,0 | (13 500,0) | (1 450,0) | (12 050,0) | 50 000,0 | 42 000,0 | 8 000,0 | 57 000,0 | 49 000,0 | 8 000,0 | |
| | 1 | 6 | 1,0 | ընդհանուր բնույթի հանրային ծառ | | 20890 | 19900 | 990 | 37900 | 24900 | 13000 | | | | | | | 50 000,0 | 42 000,0 | 8 000,0 | 57 000,0 | 49 000,0 | 8 000,0 | |
| 2200 | 2 | 0 | 0 | ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | | 1600 | 600 | 1000 | | | | | | | | | | | | | | | | |
| | 2 | 1 | 0 | քաղաքացիական պաշտպանություն | | | | | 2600 | 1600 | 1000 | 2 600,0 | 1 600,0 | 1 000,0 | | | | 2 500,0 | 1 500,0 | 1 000,0 | 2 500,0 | 1 500,0 | 1 000,0 | |
| ... | 2 | 2 | 0 | քաղաքացիական պաշտպանություն | | 1600 | 600 | 1000 | 2600 | 1600 | 1000 | 2 600,0 | 1 600,0 | 1 000,0 | | | | 2 500,0 | 1 500,0 | 1 000,0 | 2 500,0 | 1 500,0 | 1 000,0 | |
| ... | .. | . | . | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2300 | 3 | 0 | 0 | ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| ... | .. | . | . | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| ... | .. | . | . | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2400 | 4 | 0 | 0 | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | | 54 246,7 | 17 750,0 | 36 496,7 | 80 550,0 | 20 550,0 | 60 000,0 | 92 650,0 | 23 150,0 | 69 500,0 | 12 100,0 | 2 600,0 | 9 500,0 | 103 000,0 | 28 000,0 | 75 000,0 | 108 000,0 | 33 000,0 | 75 000,0 | |
| | 4 | 2 | 1 | գյուղատնտեսություն | | 14 000,0 | 6 000,0 | 8 000,0 | 18 400,0 | 5 400,0 | 13 000,0 | 23 300,0 | 6 800,0 | 16 500,0 | 4 900,0 | 1 400,0 | 3 500,0 | 29 000,0 | 7 000,0 | 22 000,0 | 30 000,0 | 8 000,0 | 22 000,0 | |
| ... | 4 | 2 | 0,4 | ոռոգում | | 31 446,7 | 2 950,0 | 28 496,7 | 52 850,0 | 5 850,0 | 47 000,0 | 62 450,0 | 9 450,0 | 53 000,0 | 9 600,0 | 3 600,0 | 6 000,0 | 64 000,0 | 11 000,0 | 53 000,0 | 66 000,0 | 13 000,0 | 53 000,0 | |
| ... | 4 | 5 | 0 | տրանսպորտ | | 8 800,0 | 8 800,0 | | 9 300,0 | 9 300,0 | | 6 900,0 | 6 900,0 | | (2 400,0) | (2 400,0) | | 10 000,0 | 10 000,0 | 0,0 | 12 000,0 | 12 000,0 | | |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2500 | 5 | 0 | 0 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | | 14 700,0 | 14 700,0 | | 17 400,0 | 17 400,0 | | 17 500,0 | 17 500,0 | | 100,0 | 100,0 | | 17 500,0 | 17 500,0 | | 19 000,0 | 19 000,0 | | |
| | 5 | 1 | 1 | աղբահանում | | 14 200,0 | 14 200,0 | | 16 500,0 | 16 500,0 | | 17 000,0 | 17 000,0 | | 500,0 | 500,0 | | 17 000,0 | 17 000,0 | | 18 000,0 | 18 000,0 | | |
| ... | 5 | 6 | 1 | ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | | 500,0 | 500,0 | | 900,0 | 900,0 | | 500,0 | 500,0 | | (400,0) | (400,0) | | 500,0 | 500,0 | | 1 000,0 | 1 000,0 | | |
| ... | .. | . | . | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2600 | 6 | 0 | 0 | ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ | | 53 620,0 | 17 620,0 | 36 000,0 | 47 830,0 | 21 830,0 | 26 000,0 | 60 250,0 | 22 250,0 | 38 000,0 | 12 420,0 | 420,0 | 12 000,0 | 74 800,0 | 24 800,0 | 50 000,0 | 78 000,0 | 28 000,0 | 50 000,0 | |
| | 6 | 3 | 1 | ջրամատակարարում | | 27 760,0 | 4 760,0 | 23 000,0 | 18 900,0 | 6 900,0 | 12 000,0 | 29 300,0 | 6 300,0 | 23 000,0 | 10 400,0 | (600,0) | 11 000,0 | 40 800,0 | 7 800,0 | 33 000,0 | 48 000,0 | 9 000,0 | 39 000,0 | |
| .... | 6 | 4 | 1 | փողոցների լուսավորում | | 25 860,0 | 12 860,0 | 13 000,0 | 28 930,0 | 14 930,0 | 14 000,0 | 30 950,0 | 15 950,0 | 15 000,0 | 2 020,0 | 1 020,0 | 1 000,0 | 34 000,0 | 17 000,0 | 17 000,0 | 30 000,0 | 19 000,0 | 11 000,0 | |
| .... | .. | . | . | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2700 | 7 | 0 | 0 | ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | 7 | 1 | 2 | այլ բժշկական ապրանքներ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| .... | .. | . | . | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| .... | .. | . | . | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2800 | 8 | 0 | 0 | ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ | | 7 200,0 | 7 200,0 | | 22 250,0 | 21 300,0 | 950,0 | 23 400,0 | 23 400,0 | | 1 150,0 | 2 100,0 | (950,0) | 25 800,0 | 25 800,0 | | 27 000,0 | 27 000,0 | | |
| | 8 | 2 | 0 | այլ մշակութային կազմակերպություններ | | 7 200,0 | 7 200,0 | | 22 250,0 | 21 300,0 | | 23 400,0 | 23 400,0 | | 1 150,0 | 2 100,0 | | 25 800,0 | 25 800,0 | | 27 000,0 | 27 000,0 | | |
| .... | .. | . | . | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| .... | .. | . | . | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2900 | 9 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | այդ թվում` | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| .... | .. | . | . | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| .... | .. | . | . | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3000 | 10 | 0 | 0 | ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ | | 6 500,0 | 6 500,0 | | 6 500,0 | 6 500,0 | | 7 000,0 | 7 000,0 | | 500,0 | 500,0 | | 7 000,0 | 7 000,0 | | 7 000,0 | 7 000,0 | | |
| | 10 | 4 | 1 | ընտանիքի անդամներ և զավակներ | | 3 000,0 | 3 000,0 | | 3 000,0 | 3 000,0 | | 3 000,0 | 3 000,0 | | 0,0 | 0,0 | | 3 000,0 | 3 000,0 | | 3 000,0 | 3 000,0 | | |
| .... | .10. | 7 | 0,1 | սոցիալական հատուկ արտոնություններ | | 3 500,0 | 3 500,0 | | 3 500,0 | 3 500,0 | | 4 000,0 | 4 000,0 | | 500,0 | 500,0 | | 4 000,0 | 4 000,0 | | 4 000,0 | 4 000,0 | | |
| .... | .. | . | . | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | | 94 006,5 | 94 006,5 | | 115 833,7 | 115 833,7 | | 108 850,0 | 108 850,0 | | (6 983,0) | (6 983,0) | | 70 900,0 | 70 900,0 | | 72 650,0 | 72 650,0 | | |
| | 11 | 1 | 0 | պահուստային ֆոնդ | | 94 006,5 | 94 006,5 | | 115 833,7 | 115 833,7 | | 108 850,0 | 108 850,0 | | (6 983,0) | (6 983,0) | | 70 900,0 | 70 900,0 | | 72 650,0 | 72 650,0 | | |
| .... | .. | . | . | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| .... | .. | . | . | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | այդ թվում ծախսերի վերծանումը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | ............... | | | | | | | | | | | | | | | | | | | | |

*Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման տողերի, բաժինների, խմբերի և դասերի բացվածքը ներկայացնել համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 15.08.2006թ. N 730-Ն հրամանի (հատված 6-ում տրված բացվածքի)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,Էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 77Ա

## ԹԱՌԱԹՈՒՄԲ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 29.12.2011թ. «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման նփոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի հանրապետության կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով»-ի 17/06/2025թ. N2/փ-193 դրական եզրակացությունը

## *Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է*

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքը (0,16982հա մակերեսով, 10-024-0109-0077 կադաստրային ծածկագրով) փոխադրել հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը պատմական և մշակութային:

| | | |
|---|---|---|
| Կողմ -6 | Դեմ -1 | Ձեռնպահ -1 |
| ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ | ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ | ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐՍԵՆ |

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 78Ա

***ՀՈՐՍ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները

***ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է***

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Հորս գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 6.6463հա մակերեսով (կադաստրային ծածկագիր՝ 10-031-0107-0021) վարելահող, այլ հողատեսքը (5,3694 հա վարելահող և 1,2769 հա այլ հողատեսք) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը կոմունալ ենթակառուցվածքների:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով»-ի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ -0 Դեմ -8 Ձեռնպահ -0

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 79Ա

***ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՐԵՆ ԷԴՎԱՐԴԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջներով,

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Եղեգիս գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Եղեգիս գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Կարեն Էդվարդի Մարգարյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսքը (0,139հա մակերեսով, 10-021-0114-0013 կադաստրային ծածկագրով) փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն կառուցելու համար:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ
ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ
ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 80Ա

*ՔԱՂԱՔԱՑԻ ԹԱՄԱՐԱ ԳԵՎՈՐԳԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021թ. հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987-Ն որոշման 1-ին կետի 14-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Շատին գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Շատին գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Թամարա Գևորգի Խաչատրյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի (0,15141հա մակերեսով, 10-035-0231-0081 կադաստրային ծածկագրով) նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նշանակության հողերի կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք

ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 81Ա

*ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 77-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Եղեգիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալի 11/08/2025թ. թիվ 198Ա որոշումը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Եղեգիս համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը, և ստորև ներկայացված գույքերը գույքագրել Եղեգիսի համայնքապետարանի գույքային հաշվեկշռում՝

աթոռ-10 հատ, 150000 ՀՀ դրամ

FMC920 տեղորոշիչ-4 հատ, 120000 ՀՀ դրամ,

FMC125 տեղորոշիչ-2 հատ, 80000 ՀՀ դրամ,

Վառելիքի մակարդակի տվիչ-2 հատ, 200000 ՀՀ դրամ,

Աթոռ փափուկ մետաղական կարկասով-50 հատ, 480000 ՀՀ դրամ,

Ձայնային համակարգ GEEPAS GMS 8519- 1 հատ, 55000 ՀՀ դրամ,

Սնուցող սարք UPS MERCURY 750- 1 հատ, 20000 ՀՀ դրամ,

բազմաֆունկցիոնալ սարք CANON MF 275DW-1 ՀԱՏ 145 000 ՀՀ դրամ,

բացվող աստիճան-1 հատ, 110000 ՀՀ դրամ,

հորատիչ բենզինային-1 հատ, 90000 ՀՀ դրամ,

եռակցման ապարատ- 1 հատ, 180000 ՀՀ դրամ,

Ճրակ C-40 E-22 հատ, 9075000 ՀՀ դրամ,

Ճրակի տեղադրման հարթակ-22 հատ, 660000 ՀՀ դրամ,

Ճրակի կառավարման թվային համակարգ «Լոկատոր»-23 հատ, 6325000 ՀՀ դրամ,

Էլեկտրական մալուխ-600 մետր, 432000 ՀՀ դրամ,

սեղան- 2 հատ, 150000 ՀՀ դրամ,

պահարան-2 հատ, 240000 ՀՀ դրամ,

Համակարգչի պրոցեսոր CPUi3-12100, RAM8GB, SSD 512-1հատ, 150000 ՀՀ դրամ,

Մոնիտոր ALHUA DHI-LM22-B2000S-1 հատ, 45000 ՀՀ դրամ,

Բազմաֆունկցիոնալ տպիչ սարք CANON 3010-1 հատ, 145000 ՀՀ դրամ,

Դինամիկ ARDMIRAL-2 հատ, 12 000 ՀՀ դրամ,
Հովհար MIDEA 4005-1 հատ, 16000 ՀՀ դրամ,
Արտաքույնք գյուղի վարչական սահմանների 9-րդ փողոց 2 հասցեում գտնվող հանդիսությունների սրահ (կադաստրային ծածկագիր 10-010-0082-0024, հողամասի մակերեսը 0,09395հա, շինությունների ընդհանուր մակերեսը 242,56ք/մ):

2.Հաստատել Եղեգիս համայնքի գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունը և ստորև ներկայացված գույքը հանել Եղեգիսի համայնքապետարանի գույքային հաշվեկշռից`

Հերմոն գյուղի վարչական սահմանների Սիրանեսի փողոց 27/1 հասցեում գտնվող առնտրի սրահ (կադաստրային ծածկագիր 10-029-0014-0014, հողամասի մակերեսը 0,01168հա, շինության արտաքին մակերեսը 25,7ք/մ):

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՇԱՐՈՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՇԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 82 Ն

## 27-Ը ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 2Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

Հաստատել Եղեգիս համայնքի 27 հունվարի 2025 թվականի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 2Ն որոշման մեջ կատարվող հետևյալ վերաբաշխումը..

1)Պակասեցնել՝

Համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 01 դաս 01 օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում ոլորտի, տնտեսագիտական դասակարգման 4111- աշխատողների աշխատավարձներ և հավելավճարներ հոդվածից 3380,0 հազար (երեք միլոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

ավելացնել՝

ա.Գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 06 դաս 01 ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ ոլորտի, տնտեսագիտական դասակարգման 4512- սուբսիդիաներ ոչ պետական ֆինանսական կազմակերպություններին հոդվածին 3380,0 հազար (երեք միլոն երեք հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ

ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 83 Ա

## *ԱՂՆՋԱՁՈՐ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ «ՍԱՐԱՀԱՐԹ» ԿՈՉՎՈՂ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՉՇԱՀԱԳՈՐԾՎՈՂ ՑԻՆԿԵ ԽՈՂՈՎԱԿԱՇԱՐԻՑ 150 ՄԵՏՐ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Տալ համաձայնություն ապամոնտաժելու Աղնջաձոր գյուղի «Սարահարթ» տարածքում գտնվող չշահագործվող խողովակաշարից 150 (մեկ հարյուր հիսուն) մետր և օգտագործել Աղնջաձոր գյուղի «Խաչքարերի առու» կոչվող ոռոգման ջրատարից օգտվող բնակիչներ Մանվել Գաբրիելյանի, Բորիս Սիմոնյանի, Ժորա Զոհրաբյանի, Սոֆիկ Ստեփանյանի, Հարութ Ստեփանյանի, Նինա Ստեփանյանի, Ալիսա Ստեփանյանի և Ռուբիկ Հայրապետյանի հողամասերը ոռոգման ջրով ապահովելու նպատակով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ
ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ
ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 84 Ա

## *ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Եղեգիս համայնքի հաշվեկշռում գտնվող հակավորող երկու տեխնիկան, մեկ հատ կախովի խոտհնձիչը և XSB մակնիշի երկու տրակտորները վարձակալության օգտագործման տրամադրելու մասին Եղեգիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկը:

2.Վարձավճար սահմանել՝

1) Կախովի խոտհնձիչ մատնասեգմենտային КСФ-2,1 Б-4 - ի համար ամսական 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:
2) անիվավոր տրակտոր 1,4 քարշակ դասի՝ կոմունալի հրիչով, XSB804 - ի համար ամսական 75000 (յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ:
3) Խոտ հավաքիչ մամլիչ Տուկան ՊՊՏ-041 /ԱՏԳ-ի համար ամսական 75000 (յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ:

Կողմ -0 Դեմ -8 Ձեռնպահ -0

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ
ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ
ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ... 08914317

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 85 Ա

## *ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 83-րդ հոդվածի 2-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

Ընդունել ի գիտություն Եղեգիս համայնքի ղեկավարի հաղորդումները 2025թ. երկրորդ եռամսյակի բյուջեի կատարման ընթացքի մասին՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ
ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ
ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված

Եղեգիս համայնքի ավագանու

15–ը օգոստոսի 2025թ. N 85Ա որոշման

Եկամտային մաս. հազ.դրամ

| Եկամտատեսակ | Նախատեսված /2-րդ եռամսյակ/ | Կատարողական /2-րդ եռամսյակ/ | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Գույքային հարկեր անշարժ գույքից | 3250,0 | 1150,2 | 35,4 |
| Գույքահարկ փոխադրամիջոցներից | 9000,0 | 5992,6 | 66,6 |
| Տեղական տուրքեր | 250,0 | 231,5 | 92,6 |
| համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալությունից եկամուտներ | 2575,0 | 1453,8 | 56,5 |
| Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալությունից եկամուտներ | 3046,0 | 0 | 0 |
| Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ | 73970,4 | 73970,4 | 100,0 |
| Այլ դոտացիաներ | 0 | 0 | 0 |
| Տեղական վճարներ | 2950,0 | 3146,9 | 106,7 |
| Այլեկամուտներ /Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, Վարչական գանձումներ,օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված համայնքի բյուջե մուտքագրման ենթակա այլ եկամուտներ/ | 1500,0 | 2302,8 | 153,5 |

| Ծախսային մաս | Նախատեսված /2-րդ եռամսյակ / | Կատարողական /2-րդ եռամսյակ / | Կատարման տոկոս |
|---|---|---|---|
| Դրամով վճարվող աշխատավարձեր և հավելավճարներ | 37250,0 | 33485,5 | 89,9 |
| Պարգևատրումներ | 1800,0 | 1708,0 | 94,9 |
| Էներգետիկ ծառայություններ | 3875,0 | 4018,2 | 103,7 |
| Կոմունալ ծառայություններ | 4125,0 | 4232,7 | 102,6 |
| Կապի ծառայություններ | 500,0 | 336,1 | 67,2 |
| Գործողումների և շրջագայությունների ծախսեր | 375,0 | 138,0 | 36,8 |
| Պայմանագրային ծառայությունների ձեռքբերում | 10860,0 | 3744,2 | 34,5 |
| Դրամաշնորհներ | 2750,0 | 0 | 0 |
| Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ | 1625,0 | 0 | 0 |
| Սուբսիդիաներ | 9400,0 | 9380,3 | 99,8 |
| Այլ ծախսեր | 575,0 | 557,6 | 96,8 |
| Պահուստային միջոցներ | 30108,4 | 2300,0 | 7,6 |
| Շենքերի և շինություններ կապիտալ վերանորոգում, շինարարություն | 27000,0 | 0 | 0 |
| Մեքենաներ և սարքավորումներ, այլ հիմնական միջոցներ | 5337,5 | 2738,0 | 51,3 |
| նյութեր | 6320,0 | 847,1 | 13,4 |

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ ........................................ Ա. Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 86 Ա

*ՀՈՐՍ ԳՅՈՒՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

Տալ համաձայնություն Եղեգիս համանքի սեփականություն հանդիսացող Հորս գյուղի մշակույթի տան շենքում վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ իրականացնելու համար:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ
ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ
ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 87 Ա

## *ՄԱՆԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

Տալ համաձայնություն մանկական զարգացման կենտրոնի բացման նպատակով Եղեգիս համանքի սեփականություն հանդիսացող Շատին գյուղի մշակույթի տան շենքում վերանորոգման և բարեկարգման աշխատանքներ իրականացնելուն:

Կողմ -0 Դեմ -8 Ձեռնպահ -0

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ
ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ
ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 ՕԳՈՍՏՈՍԻ 2025թվականի N 88 Ա

## *ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,93885 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

## *ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն աճուրդով օտարելու մասին.

կադաստրային ծածկագիր 10-035-0201-0005, մակերեսը՝ 0,93885 հա, մեկ լոտ:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 150 (մեկ հարյուր հիսուն) տոկոսը:

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ
ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ
ՍՄԲԱՏՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԱՀԱՐՈՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ